## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

**Վ. Հ. ԲՈՅԱՆ, Հայ ազգագրություն: Համառոտ ուրվագիծ. Երևան, 1974, 287 էջ**

*Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը վերջերս լույս ընծայեց պատմական գիտությունների դոկտոր Վարդ Բոյանի վերոհիշյալ աշխատությունը՝ նվիրված հայոց կենցաղի ու մշակույթի բնութագրմանը։*

*Գրքի կարևորագույն արժանիքներից է այն, որ գրված է ժամանակակից գիտությանը հայտնի փաստերի հիման վրա։ Հեղինակը օգտագործել է հնագիտական, մատենագրական, բանահյուսական, ազգագրական նյութերը, ինչպես նաև գեղարվեստական գրականությունը, մանրանկարչությունը և իր հավաքած ազգագրական դաշտային հարուստ նյութերը։*

*Աշխատությունն սկսվում է «Աղբյուրների և գրականության տեսությունով», որտեղ հեղինակը տալիս է ազգագրության բնորոշումը, նրա կապը հարակից գիտությունների հետ, բնութագրում այն ոկզբնաղբյուրներն ու գրականությունը, որոնք հայոց ազգագրության ուսումնասիրության հիմքն են։ Տրվում է նաև հայ ազգագրության զարգացման հակիրճ պատմությունը, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում Գ. Արվանձտյանցի և Ե. Լալայանի բեղմնավոր գործունեությանը։*

*Սակայն այս բաժնում կան որոշ վրիպումներ և սխալ մեկնաբանումներ։ Այսպես՝ սկզբնաղբյուրները բնութագրելիս չեն հիշատակվում արաբական և թուրքական աղբյուրները, որոնք բավականին արժեքավոր նյութեր են պարունակում հայոց կենցաղի և մշակույթի վերաբերյալ։ Դժվար է համաձայնվել հեղինակի այն թեզի հետ, որ ազգագրության հիմնական աղբյուր են «գրավոր հիշատակարանները» (էջ 3)։ Դա ճիշտ է միայն պատմական ազգագրության համար, որի ուսումնասիրության օբյեկտն են հին և անհետացած ժողովուրդները, իսկ առհասարակ ազգագրության հիմնական և կարևորագույն աղբյուր են ազգագրական դաշտային նյութերը, որոնք հավաքվում են անմիջական դիտումների և հարցումների միջոցով։ Ճիշտ չէ նաև հեղինակի այն տեսակետը, ըստ որի ազգագրությունը որպես գիտություն Հայաստանում ձևավորվել է XIX դ. սկզբներին (էջ 10)։ Իրողությունն այն է, որ Գ. Արվանձտյանցի և Ե. Լալայանի գործունեության շնորհիվ XIX դ. 70—90-ական թվականներին միայն հայ ազգագրությունը ձևավորվեց իբրև գիտություն։*

*Գրախոսվող աշխատության առաջին գլուխը նվիրված է տնտեսական կենցաղին, որտեղ ազգագրական, ինչպես նաև լայն համեմատական հարուստ նյութերի հիման վրա բնութագրվում են երկրագործությունը, անասնապահությունը, որսորդությունն ու ձկնորսությունը, տնային արդյունաբերությունն ու արհեստները, հաղորդակցության և կապի միջոցները։ Հատկապես ուշադրավ է երկրագործական գործիքներին նվիրված հատվածը, ուր հեղինակը ձգտում է բացահայտել այդ գործիքների տեղական առանձնահատկություններն ու դասակարգել դրանք ըստ ազգագրական շրջանների։ Նրան հաջողվել է առանձնացնել վարող գործիքների յոթ համալիր և ապացուցել, որ մինչև XX դ. սկիզբը վարող գործիքների բացարձակ ընդհանրացում Հայաստանում տեղի չի ունեցել։ Ինչպես իրավացիորեն նշում է Վ. Բոյանը, հայոց մեջ լայնորեն տարածվեցին նմանօրինակ արորների առատամներն ու թրերը և զարգացած գութանները։*

*Ուշագրավ է հեղինակի դրի առած շարացան համակարգը Վանա լճի ավազանում, որը պահպանվել էր շաղացանին զուգընթաց։ Այդ համակարգը իրավամբ բնութագրվում է որպես երաշտի դեմ պայքարելու հուսալի ձև (էջ 46) և նրա հետ է կապվում այն հանգամանքը, որ Վասպուրականը հռչակված էր ցորենի բարձր բերքատվությամբ։ Հետաքրքիր է, որ այդ համակարգը տեղացիների մեջ հայտնի էր տիր և օգտագործվող վարող գործիքները՝ տրի առոյ և տրի գութան անուններով։*

*Համոզիչ է հեղինակի՝ բերքահավաքի և կալսոցի գործիքները երկու խմբի բաժանելու փորձը, կապված բրիչային և արորային երկրագործության հետ (էջ 47)։ Այս հատվածում բերված են ճանաչողական առումով հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ նյութեր, որոնք վկա-*

յում են դարերի ընթացքում հայ ժողովրդի կուտակած փորձի, հմտության և աշխատանքների մասին։ Սակայն հեղինակի ուշադրությունից վրիպել է երկրագործական համակարգերի բնութագրությունը, որին չափազանց մեծ նշանակություն է տրվում ժամանակակից ազգագրության մեջ։ Ժողովրդի փորձն ու հմտությունները, ինչպես նաև երկրագործական մշակույթի զարգացման աստիճանը այսօր բնորոշվում են երկրագործական համակարգերով (անտառահատահրկիդային, հարթային, ցանքաշրջանառային, դարավանդային և այլն)։ Երկրագործական համակարգերով բացահայտվում են նույնիսկ էթնիկական առանձնահատկությունները։ Ցանկալի կլիներ հայերի կողմից մշակվող բույսերի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ հաղորդել։ Բացի այդ՝ երկրագործական մշակույթին վերաբերող որոշ դրույթներ համոզիչ չեն թվում։ Այսպես, օրինակ, գործիքների մեջ նկատվող տարբերությունները հեղինակը հակված է բացատրել «ցեղային ավանդների տեխնոլոգիական պրոցեսների պահպանմամբ՝ բոլոր աղգագրական շրջաններում» (էջ 37), սոցիալ-տնտեսական, բնակլիմայական, քաղաքական պայմաններին հատկացնելով երկրորդական տեղ։ Մեր թվարկությունից դարեր առաջ էթնիկապես համախմբված այնպիսի ժողովուրդ, ինչպիսիր հայերն էին, դժվար թե ցեղային ծագում ունեցող տարրերը պահպանեին մինչև մեր օրերը։ Այդ տարբերությունների հիմնական պատճառը պետք է բացատրել բնատնտեսության և մանր-ապրանքային կացութաձևի լճացման բնույթով։ Հենց այստեղ էլ հարկավոր է փնտրել հին գործիքների՝ հարյուրամյակների ընթացքում էական փոփոխությունների չենթարկվելը, այլ ոչ թե «ժողովրդի ավանդապահությամբ»։ Հայտնի է, որ մինչկապիտալիստական շրջանում մշակույթի տարրերը հաճախ կրում էին ինչպես բնատաբածքի, այնպես էլ նույնիսկ անհատի մակնիշը։

Թվում է իրավացի չէ հեղինակը, երբ հայ ժողովրդի երկրագործական մշակույթը սկսում է բնութագրել բրիտային երկրագործությունից, այն դեպքում, երբ արոբային երկրագործությունը Հայկական լեռնաշխարհով մեկ տարածվել էր դեռևս բրոնզի դարաշրջանում, երբ հայկական էթնոսը տակավին չէր ձևավորվել։

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում երկրագործական գործիքների անվանումները, որոնց մի մասը համահայկական է, մյուսը՝ տեղական, բնորոշ աղգագրական շրջաններին։ Սակայն միշտ չէ, որ դրախոսվող գրքում տրվում է դրանց հնարավոր ստուգաբանությունը, որը մեծապես կնպաստեր պատմամշակութային մի շարք հարցերի պարզաբանմանը, այդ թվում նաև՝ տեղական և փոխառնված տարբերի բացահայտմանը։

Անասնապահությանը նվիրված բաժինը մեծապես կշահեր, եթե բնութագրվեին նաև անասնապահության ձևերը, որոնք տարբեր շրջաններում դանազանվում էին և խոր կնիք դնում բնակչության նիստ ու կացի վրա, պայմանավորելով մի շարք կենցաղամշակութային առանձնահատկությունների ձևավորումը։ Ցանկալի էր տնայնագործության և արհեստների բաժնում ավելի շատ փաստական նյութ բերել, որպեսզի բացահայտվեր դրանց որակական ինքնատիպությունը հայոց մեջ։ Ընթերցողին նույնիսկ անհայտ է մնում, թե տնայնագործական և արհեստագործական ո՞ր ճյուղերն էին առավել տարածված ու զարգացած։ Հայերին այնքան բնորոշ նույնիսկ բրուտագործությունը, քարակոփությունը, դարբնությունը, ջուլհակությունն ու կորգագործությունը արժանի հետազոտության չեն ենթարկվել։

Հետաքրքիր է հաղորդակցության միջոցներին նվիրված բաժինը, որտեղ բնութագրվում են բեռնատարության ավանդական ձևերը, գրաստի ու սայլի տարբեր տեսակների տարածումը Հայաստանում՝ կապված տեղի բնակլիմայական ու տնտեսական պայմանների հետ։ Այստեղ մանավանդ ուշադրավ են հեղինակի հավաքած ազգագրական դաշտային հազվադեպ նյութերը։

Գրախոսվող աշխատության երկրորդ գլխում (Նյութական մշակույթ) բնութագրվում են բնակավայրերը, բնակելի և տնտեսական կառույցները, զգեստը ու զարդարանքը, կահ-կարասին և ուտեստը։ Նյութի լավ իմացությունը հնարավորություն է տվել բացահայտելու մշակույթի վերոհիշյալ տարրերի բնորոշ առանձնահատկությունները և որակական ինքնատիպությունը հայոց մեջ։ Այս բոլորը արվում է երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի պատկերի վրա, որը նպաստում է նյութի ճիշտ ընկալմանը և որակավորմանը։ Հեղինակը ցույց է տալիս այդ տարբերի բազմաղանությունն ու տարբերությունը քաղաքում և գյուղում, տարբեր սոցիալական խավերում և ուրվագծում է այն փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել սովետական շրջանում։ Առավել հաջողված է գոմի օդայի բնութագրությունը, որը տրվում է բնակչության կենցաղի հետ սերտորեն շաղկապված։ Վ. Բդոյանը իրավացիորեն նշում է, որ անցյալում շատ շրջաններում գոմի օդան եղել է ոչ միայն անասնախնամ մարդկանց հանգստարանն ու ննջարանը, այլ նաև՝ հյուրասենյակ, հավաքատեղի, զվարճասենյակ և այլն (էջ 81)։

«Զգեստ և զարդարանք» ենթաբաժնում ցայտուն ձևով արտացոլված են տարազի (հատկապես կանացի) տեղական առանձնահատկությունները, որոնք որոշակիորեն տարբերվում են ըստ ազգագրական շրջանների։ Բայց այստեղ էլ դժվար թե ընդունելի լինի հեղինակի այն թեզը, ըստ որի այդ տարբերություններն ու առանձնահատկությունները բացատրվում են նրանով, որ «յուրաքանչյուր ժողովուրդ իր մեջ ժառանգում է ցեղային միությունների որոշ ավանդներ» (էջ 96)։

Ցանկալի կլիներ, որ հեղինակը ավելի մեծ տեղ հատկացներ բնակավայրերի էվոլյուցիային, բնակելի կառույցների բազմազանությանը և կնոջ գլխի ավանդական հարդարանքին, որը կենցաղա-մշակութային առումով չափազանց մեծ հետաքրքրություն է ներկայացնում և տարազի ազգագրորեն առավել հետաքրքիր տարրն է։

Երրորդ գլխում (Հասարակական կենցաղ) փաստորեն արծարծվում են հարցեր՝ կապված միայն ընտանեկան կենցաղի և ազգակցական հարաբերությունների հետ։ Հեղինակը պատմա-ազգագրական նյութերի հիման վրա բնութագրում է նահապետական գերդաստանը և նրա վերապրուկները, ներընտանեկան հարաբերությունները, փոքր ընտանիքը, նրա կառուցվածքն ու կազմը, ամուսնության ավանդական և ժամանակակից ձևերը, հարսանյաց ծիսակատարությունները։

Այս գլխում շարադրվածը կշահեր, եթե հեղինակը կիրառեր մեկ այլ արդյունավետ մեթոդ։ Նա նյութը բաժանում է ըստ ժամանակաշրջանների և բնութագրում առանձին-առանձին։ Այսպես, օրինակ, առանձնացնում է «Ընտանեկան կենցաղը մինչև XIX դ.» և «Ընտանիքն ու ընտանեկան կենցաղը XIX—XX դդ.», «Ամուսնությունը միջնադարում» և «Ամուսնությունն ու ամուսնական սովորությունները XIX—XX դդ.», ցանկանալով տալ պատմական զարգացման ընթացքը, որը, սակայն, վաղ շրջանի նյութի կցկտուր լինելու պատճառով չի հաջողվում հեղինակին։ Եվ պատահական չէ, որ, օրինակ, «Ընտանեկան կենցաղը մինչև XIX դ.» բաժնում նա չի բնութագրում նահապետական գերդաստանը, իսկ հաջորդ «Ընտանիքը և ընտանեկան կենցաղը XIX—XX դդ.» հատվածում արդեն այն դիտվում է որպես վերապրուկ և նոր միայն բնութագրվում։ Այս բաժանումը չի նպաստում տարբեր ժամանակաշրջանների նյութերի համատեղ վերլուծությանը և կենցաղային տարրերն իրենց ճիշտ որակավորումը չեն կարող ստանալ։ Ցանկալի կլիներ կիրառել ժամանակակից գիտության մեջ ընդունված պատմա-ազգագրական վերականգնման կոմպլեքսային մեթոդը, որը հնարավորություն կտար իմաստավորելու և՛ հին, և՛ նոր երևույթները։

Հարսանիքի հետաքրքիր բնութագրման մեջ գրեթե չի արտացոլված քավորի կարևոր դերը, որն այնքան բնորոշ էր հայոց մեջ։ Պարզունակ են ծիսական կարգերի և սովորույթների բնութագրությունները։ Այս բաժնում հաճախ են օգտագործվում ընթերցողների լայն շրջաններին անծանոթ օտարամուտ տերմիններ, որոնք ունեն իրենց հայերեն համանիշները (օրինակ, մատրիլոկալ՝ մայրատեղային, պատրիկլոկալ՝ հայրատեղային, սորորատ՝ քենամուսնություն և այլն)։ Տերմինների սխալ օգտագործումը կարող է շփոթ առաջացնել ընթերցողի մեջ։ Օրինակ, «գիսլոկալ տարաբնակեցում» (էջ 139) արտահայտությունը սխալ է, քանի որ լատինական «գիսլոկալ» տերմինն ինքնին նշանակում է «տարաբնակ»։ Մյուս կողմից՝ «գիսլոկալ» (տարաբնակ) են անվանում ոչ թե «կարճ կամ երկար նշանված մնալուն» (էջ 139), այլ ամուսինների առանձին-առանձին տարբեր տեղերում (գյուղերում, համայնքներում և այլն) ապրելուն։

Աշխատության վերջին գլուխը (Հոգևոր մշակույթը) ընդգրկում է բանահյուսությունը, պարարվեստը, ժողովրդական խաղերն ու տոները, կրոնական հավատալիքներն ու հայ հեթանոսական պանթեոնը։ Առավել հաջողված կարելի է համարել ժողովրդական տոներին նվիրված հատվածը, որտեղ մասամբ հեղինակի հավաքած ազգագրական հարուստ նյութերով բնութագրվում են հայոց տոնացույցի հիմնական տոները և բացահայտվում դրանց առանձնահատկությունները։

Աշխատությունը կշահեր, եթե արտացոլվեին միևնույն տոների տարբերակները և դրանց պահպանման աստիճանը ազգագրական տարբեր շրջաններում, ինչպես դա կատարվել է վարող գործիքների, տարազի բաժիններում։ Սխեմատիկ և պակասավոր է բանահյուսությանը վերաբերող հատվածը, որտեղ ավելի շատ խոսվում է բանահյուսության նշանակության և ժանրերի տեսակների մասին, իսկ որ առավել կարևոր է՝ հայոց բանահյուսության որակական ինքնատիպությունը, նրա մեջ ազգային կենցաղի ու մշակույթի արտացոլումը դուրս են մնացել։

Ընթերցողը հետաքրքրությամբ ծանոթանում է հավատքի բաժնում բերված նյութերին, ուր հեղինակը հմտորեն բնութագրում է քարի, հողի, աղի, ջրի, լուսատուների ու կրակի պաշտամունքը հայոց մեջ, այն սերտորեն կապելով ժողովրդի նիստ ու կացի հետ։ Դրախոսվող գրքում

առանձին բնության առարկա են դարձել կենդանիների հետ կապված անհավատությունները (ուր միահյուսված են բնութագրվում ընտանի, վայրի և առասպելական կենդանիների պաշտամունքները) և երկրագործական պաշտամունքը, որը, թվում է, այնքան էլ ճիշտ չէ։ Ցուլի պաշտամունքը տրվում է անասնապահական պաշտամունքի մեջ, բայց նրա իսկական տեղն ու դերը կարելի է հասկանալ միայն երկրագործության հետ կապված, քանի որ հենց այդ կապի շնորհիվ է ցուլի պաշտամունքը առաջնային տեղ գրավում հայոց մեջ։ Ուստի նպատակահարմար կլիներ համատեղ դիտել երկրագործական և բուն անասնապահական պաշտամունքները։

Ուշադրավ են «Երկրագործական պաշտամունքը» հատվածում բերված փաստական տվյալները, որոնք որոշակիորեն վկայում են երկրագործության հետ կապված մի շարք գործիքների ու սարքերի պաշտամունքային առարկա լինելը (գութանը, արորը, դրանց բաղկացուցիչ մասերը և այլն)։ Այս նյութերը ևս հայ ժողովրդի երկրագործական մշակույթի հնագույն ավանդների վառ ապացույցն են և վկայում են տնտեսության այդ ճյուղի գերակշռության մասին։

Հարուստ նյութերով ու հետաքրքիր վերլուծություններով է հագեցված «Հայ հեթանոսական պանթեոնը», ուր հիմնական աստվածների մանրամասն բնութագրություններն են տրվում։ Առավել խրախուսելին այն է, որ այդ բոլորը տրվում է նաև բազմաթիվ կենցաղային երևույթների հիման վրա։ Առանձին ուշադրություն է դարձված հայ ավանդական դյուցազունների, հատկապես Հայկի, Արամի, Արա Գեղեցիկի և Տորք Անգեղի կերպարներին, նրանց հետ կապված ավանդապատումներին ու ասացվածքներին։

Սակայն այս բաժնում ևս որոշ կարևոր հարցեր կամա թե ակամա շրջանցվել են։ Այսպես, օրինակ, ժողովրդական կիրառական և կերպարվեստները, երաժշտական բանահյուսությունը, բնորոշ հայկական երաժշտական գործիքները, զուսանական արվեստը և մի շարք այլ բնագավառներ, որոնք անհամեմատ արժեքավոր կղարձնեին հոգևոր մշակույթին նվիրված հատվածը։

Այս բնույթի աշխատության մեջ անհրաժեշտ էր հենց սկզբից հայերի մասին տալ ընդհանուր տեղեկություններ, հակիրճ բնութագրելով հայոց ծագումնաբանությանը և էթնիկական պատմությանը վերաբերող ժամանակակից հայագիտության մեջ եղած վարկածները, հայ ժողովրդի տարաբաշխվածությունը և այլն։

Հասարակական կենցաղի բաժնում հեղինակը շրջանցել է այնպիսի մի կարևորագույն բնագավառ, ինչպիսին է գյուղական համայնքը, որի վերապրուկներն, ընդհուպ մինչև խորհրդային շրջանը, գոյատևում էին բավականին պահպանված ձևով։ Եվ հայկական գյուղին, հայկական տարրին հենց հնագույն շրջանից բնորոշ են եղել համայնական նորմաներն ու ավանդույթները։ Ուստի դրանց ընդգրկումը անհրաժեշտ ելակետ կհանդիսանար ճիշտ ընկալելու և որակավորելու կենցաղային սովորույթների շատ կողմեր։

Շահավետ կլիներ, եթե ավելի հետևողականորեն ու լայնորեն բնութագրվեին խորհրդային շրջանում հայ ազգի կենցաղի ու մշակույթի որակական ինքնատիպությունը, ժամանակակից և ավանդական տարրերի հարաբերակցությունը տարբեր բնագավառներում, ազգային առաջադիմական ավանդույթների զարգացումը մեր օրերում։ Դա կարելի էր կենսագործել երկրագործական և անասնապահական մշակույթների, բնակավայրի ու բնակարանի, ուտեստի, ընտանեկան կենցաղի, պարային, երգեցողական և կերպարվեստների բնագավառներում։

Այս ամենով հանդերձ՝ ազգագրագետ Վ. Բդոյանի սույն աշխատությունը ուշադրության արժանի գործ է, որը կնպաստի ապագայում այս բնույթի նոր, ավելի լայն ու խորը ընդգրկում ունեցող աշխատությունների հանդես գալուն։

ՅՈՒ. Ի. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու